Հայկական գիտահետազոտական համգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավատություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ս. Ս. Հ. Ս. Հ. Ս. Ս. Հ.
Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

Ն. ՊՈԼԵՎ

ԻՆՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ՏԱԼԻՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՅԵՎ ՆԱՎԱՏՈՐՄՂՈՒՄ

Թարգ. ռուս.

Պետական Ռազմ. Հրատ. պատվերով հրատարակել Մոսկվայի Ակցիոներական Հրատարակչական Ընկերությունը

ԵՐԵՎԱՆ 1926

ՑԱՆԿ

Եջ.

1. Զինվորական ծառայողների դրությունը խորհրդային և բուրժուական յերկրներում . . 3
2. Զինվորական ծառայողների ընդհանուր իրավունքները 8
3. Արտոնություններ հողագործության և գյուղատնտեսության ասպարեզներում . . 12
4. Արտոնություններ հարկեր և տուրքեր վճարելիս 16
   բ) Հասույթային—գույքային հարկ վճարելիս 19
   գ) Հող-յեկամտային տուրք վճարելիս . . 20
   դ) Գրասենյակային տուրք վճարելիս . . . 20
   ե) Դրոշմատուրք վճարելիս 21
   Պետական վորսորդական տուրք վճարելիս 21
   զ) Տեղային տուրքադրման վերաբերյալ . . 22
5. Բնակարանային արտոնություններ . . . 23
6. Արտոնություններ աշխատանքի և սոցիալահովագրության ասպարեզներում 26
7. Բժշկական ոգնություն 32
8. Արտոնություններ փոխադրությունների ժամանակ 33
9. Առավելություններ և արտոնություններ ժողովրդական լուսավորության ասպարիզում . 39
10. Փոստային արտոնություններ 40
11. Դրամական նպաստներ 41

Ս. Խ. Հ. Փ. Հ. Ս. Խ. Հ.

Գրոլեթարներ բոլոր յերկիրների, միացեք

Ն. ՊՈԼԵՎ

355.21

ԻՆՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ՏԱԼԻՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՅԵՎ ՆԱՎԱՏՈՐՄՂՈՒՄ

Ռուս. թարգ. Պ. Ս.

Հանր. գրադ. Ի. Մեծի անվ. գրադարան № 2

Պետական Ռազմ. Հրատ. պատվերով հրատարակել է Մոսկվայի Ակցիոներական Հրատարակչական Ընկերությունը

ՅԵՐԵՎԱՆ 1926

Ա 96056 Ա 4484

Н. ПОЛЕВ

Какие льготы и преимущества дает служба в Красной Армии и Флоте.

НА АРМЯНСК. ЯЗЫКЕ

По заказу Государственного Военного Издательства исполнено Московским Акционерным Издательским Обществом

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 171բ. Պատ. 5130 Տիր. 1100

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՑԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Խորհրդային Հանրապետությունների Միության յուրաքանչյուր քաղաքացի և յուրաքանչյուր զինվորական ծառայող պետք է գիտենա թե ինչպես է Խորհրդային իշխանությունը հոգ տանում զինվորական ծառայության կանչվածների մասին:

Աշխարհիս վոչ մի բանակում զինվորական ծառայողները չեն ուսվում այնպիսի իրավունքներով, ինչպես Կարմիր Բանակում և նավատորմիղում ծառայողները:

Ցեվ դա հասկանալի է:

Աշխարհիս բոլոր յերկրներում, բացի Խորհրդային Միությունից, իշխանությունը դեռ ևս գտնվում է բուրժուազիայի ձեռքին: Այդ յերկրներում բանակների մեծամասնությունը կազմում են բանվորները և գյուղացիները. ազնվականների, կալվածատերերի և գործարանատերերի վորդիները այդ բանակներում վարում են սպայական պաշտոններ: Այդ պատճառով, բուրժուազիան իր բանակի զինվորներին վոչ միայն բոլորովին չի տալիս արտոնություններ և իրավունքներ, այլ և խլում է նրանց այն չնչին իրավունքները, վոր նրանք իբրև բանվորներ կամ գյուղացիներ ունեին մինչև զինվորական ծառայության գալը:

Իշխանության գլուխ կանգնած գործարանատերերը և կալվածատերերը իրենց բոլոր յերկրներում աշխա-

ուսմ են բանակ կանչված բանվորին կամ գյուղացուն դարձնել մեքենա, մի գործիք, վորը կուրորեն և առանց դատելու կը կատարե վարչության բոլոր հրամանները։

Կապիտալիստներին ձեռնտու չե, վոր իրենց բանակների զինվորները լինեն անգիտակից, տրորված, հալածված և առանց այլ և այլության հնազանդվեն իրենց ազնվական-սպաներին։ Այդպիսի զինվորները միայն կը պաշտպանեն բուրժուազիայի շահերը, միայն այդ տեսակի զինվորների ավիները կարելի չե ուղղել աշխատավորության դեմ։

Բոլորովին այլ դրություն և տիրում մեզ մոտ։

Աշխարհիս մեջ Խորհրդային իշխանությունն աշխատավորների միակ պետությունն և, բանվորների և գյուղացիների միակ իշխանությունը։ Միայն մեզ մոտ բանվորները և գյուղացիներն ազատ են, իրենք են իրենց տերերը, և ոգտվում են բոլոր իրավունքներով, իսկ բուրժուազիան քաղաքական վոչ մի իրավունք չունի։

Մեր Կարմիր Բանակը և նավատորմիղը կանչված են իրականացնելու ամենամեծ խնդիրը. այն է՝ պաշտպանել աշխատավորների շահերը շահագործողների և բռնակալների հարձակումներից։ Ավելի վեհ և մեծ խնդիր աշխարհիս մեջ վոչ մի բանակ յերբեք չի ունեցել և չունի։ Աշխատավորների շահերի պաշտպանության խնդիրը Խորհրդային իշխանությունը կարող է վստահանալ միայն աշխատավորներին՝ իրենց։ Միայն բանվորները և աշխատավոր գյուղացիները հաստատապես և հերոսաբար կը կռվեն իրենց բանվորա-գյուղացիական գործի համար։ Միայն նրանք են արժանի

լինել աշխարհիս միակ բանվորա-գյուղացիական պետության պաշտպանները։

Մեր Կարմիր Բանակը և նավատորմիղը կոչվում են բանվորա-գյուղացիական հենց նրա համար, վոր նրանք, ներքևից-վերև մինչև վերջ, կազմված են ուրիշի աշխատանքը չշահագործող բանվորներից և գյուղացիներից։

Բուրժուաները, կուլակները և նեպմանները կարմիր-բանակում տեղ չունեն։ Բանվորագյուղացիական իշխանությունը չի կարող նրանց վստահանալ զենք կրելու։ Նրանց, Խորհրդային իշխանությունը կանչում է բանակի սպասարկու խմբակները զանազան ոժանդակ աշխատանքների համար. այն է, դիրքեր փորելու, ճանապարհներ վերաշինելու, կեղտոտություններ մաքրելու և այլն։ Կարմիր բանակը և նավատորմիղը խորհրդային իշխանության հարազատ զավակներն են, նրա մարմնի անբաժան մասը։ Ահա թե ինչու վոչ մի իշխանություն այնքան հոգ չի տանում իր զինվորականների համար, վորքան Խորհրդային իշխանությունը։ Ահա թե ինչու, չընայած մեր քայքայված տնտեսությանը և աղքատությանը, բանվորա-գյուղացիական իշխանությունը անում է, ինչ որ հնարավոր է ապահովելու զինվորական ծառայողին, նրա ընտանիքին և նրա տնտեսությունը։

Միայն Խորհրդային Իշխանությունն է, վոր շահագրգռված է, վորպեսզի բանակում գտնված ժամանակ կարմիր-բանակայինը ուսումնասիրի վոչ միայն ռազմական գործը այլ և ստանա կրթություն և քաղաքական դաստիարակություն։ Վորքան ավելի գիտակից և զարգացած լինի կարմիր-բանակայինը, այնքան նա

լավ կը կարողանա պաշտպանել աշխատավորների շահերը:

Խորհրդային Իշխանությունը բոլոր միջոցները ձեռք է առնում, վերջապես կարմիր-բանակային իր ծառայությունը վերջացնելուց հետո տուն վերադառնա, իբրև ոգտակար աշխատող և կարողանա գործադրել իր գիտեցածը ժողովրդական տնտեսությունը լավացնելու և բանվորա-գյուղացիական իշխանությունն ամրացնելու համար:

Պամեշչիկների և կապիտալիստների դեմ մղվող պատերազմի տարիների ընթացքում, Խորհրդային Իշխանության համար դժվար եր ապահովել սպիտակ գվարդիականների դեմ հերոսաբար կռվող միլիոնավոր բանվորներին և գյուղացիներին: Ցարական իշխանությունից պրոլետարիատը ժառանգեց միայն քայքայված տնտեսություն: Մեր Խորհրդային Միության ամենահարուստ շրջանները գրավել եյին սպիտակ-գվարդիականները: Որեց որ յերկիրը ավելի յեվս աղքատանում և քայքայվում եր:

Բանակին ամենաանհրաժեշտ պարեն մատակարարելու համար Խորհրդային իշխանությունը պետք և ձեռք առներ ծայրահեղ և հերոսական միջոցներ:

Բոլորը հիշում են, ինչպես դժվար եր այդ ժամանակ մեղ համար:

Ամբողջ յերկիրը իրեն զոհում եր Կարմիր-բանակի համար: Բայց այնուամենայնիվ պամեշչիկների և կապիտալիստների դեմ կռվող բանվորներին և գյուղացիներին հաճախ չեր բավականացնում հացը, հագուստեղենը և վառնամանը:

Պամեշչիկներին և գործարանատերերին մեր յեր-

կրից ընդմիշտ վտարելուց հետո, աշխատավորները յեռանդուն կերպով սկսեցին վերացնել ժողովրդական տնտեսությունը: Տարեց տարի սկսում են աշխատել մինչև այդ անզործության մատնված նորա-նոր գործարաններ ու գավոդներ, հետզհետե մեծանում է մշակվող հողի տարածությունը: Չընայած մեծ դժվարությունների Խորհրդային Միության քաղաքների և գյուղերի տնտեսությունը տարեց-տարի ամրանում է: Դրա հետ միասին հետզհետե լավանում է բանվորների և աշխատավոր գյուղացիների կյանքը: Քաղաքում չկա հացի պակասություն: Ավելանում է բանվորների աշխատավարձը: Գյուղը հիմա չի զգում ինչպես առաջ էր, ճոթեղենի, աղի, նավթի, մեխի և քաղաքի այլ ապրանքների սուր կարիք: Վերջապես ավելի յե ամրանում Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությունը և լավանում է բանվորների ու գյուղացիների կյանքը, այնքան ավելի և ավելի բարելավվում է զինվորական ծառայողների դրությունը: 1921 թվից բանվորական կառավարությունը տվել է Կարմիր-բանակի և նավատորմիղի ծառայողներին ու նրանց ընտանիքներին մի շարք արտոնություններ և իրավունքներ:

Ներկայումս զինվորական ծառայողների արտոնությունների և իրավունքների բոլոր այդ որենքները հավաքված են մի ժողովածվի կամ կոդեքսի մեջ: 1924 թվի հոկտեմբեր ամսին այդ կոդեքսը հաստատված է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության կենտրոնական գործադիր կոմիտեյի կողմից:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կարմիր բանակի և նավատորմիղի զինվորական բոլոր ծառայողները վայելում են Խորհրդային Միության քաղաքացիների բոլոր իրավունքները: Նրանք իրավունք ունեն ընտրել և ընտրվել խորհրդներում, մասնակցել խորհրդների համագումարներին, ժողովներին, կոնֆերենցիաներին, մասնակցել յերկրի հասարակական կյանքին հավասարապես մնացած քաղաքացիների հետ միասին:

Նման բան չը կար ցարական բանակում, չը կա և վոչ մի բուրժուական յերկրում, վորտեղ իշխանության գլուխ կանգնած են կապիտալիստները: Բուրժուական բոլոր բանակներում վատահություն չունեն դեպի զինվորները, վորովհետև նրանք պետք է պաշտպանեն վոչ թե իրենց սեփական, այլ իրենց յերկրի բուրժուազիայի շահերը:

Այդ պատճառով, այդ յերկրների զինվորները ավելի սահմանափակ իրավունքներ ունեն, քան թե ազգաբնակչության մնացած մասը: Նրանց արգելվում և մասնակցել որենդիր մարմինների ընտրություններին, մասնակցել ժողովներին, խմբակներին և հասարակական այլ կազմակերպություններին:

Կարմիր բանակի և նավատորմիղի զինվորական ծառայողները, աշխատանքներից ազատ ժամերին, կարող են անել այն ամենը, ինչ վոր մնացած քաղաքացիները:

Նրանք կարող են հաճախել դասախոսություններ, դեկուցումներ, թատրոն կինո, ակումբ, կարող են սովորել դպրոցներում և այլն:

Զինվորական ծառայողին թույլատրվում է աշխատանքից դուրս կրել քաղաքացիական զգեստ:

Ցարական բանակի զինվորների համար հատուկ կարգ շատ տեղերի մուտքը արգելված էր: Նրանց չէր թույլատրվում պարապմունքներից ազատ ժամանակում սովորել դպրոցներում, նրանք իրավունք չունեին մինչև անգամ առանց իրենց պետերի թույլտվության պահել իրենց մոտ գրքեր, թերթեր, ամսագրեր:

Կարմիր բանակի և նավատորմիղի զինվորական բոլոր ծառայողները կազմում են բանվորագյուղացիական մի ընդհանուր ընտանիք:

Կարմիր բանակայիններին հրամանատարների և կոմիսարների մեջ գոյություն ունի ընկերական սերտ կապ: Ծառայությունից դուրս նրանց մեջ վոչ մի տարբերություն չկա և նրանք ապրում են միատեսակ իրավունքներով:

Մեր կարմիր հրամանատարների ճնշող մեծամասնությունը կազմված է նույն բանվորներից և գյուղացիներից: Յուրաքանչյուր կարմիր բանակային կարող է դառնալ հրամանատար և հասնել ամենապատասխանատու պաշտոններին:

Նման որինակներ մենք ունենք վորքան կուզեք:

Բոլոր սովորել ցանկացողների առաջ մեր ռազմական դպրոցների դռները բաց են:

Մեր յերկրում «Կարմիր-բանակային» անունը բանակում և «Կարմիր նավատորմիղայինը» նավատորմիղում, պատվաբեր կոչումներ են, վոր կրում են զինվորական բոլոր ծառայողները, հրամանատարները, քաղ-աշխատողները, շարքային կարմիր-բանակային-

ները, վարչական, բժշկական և անասնաբուժական կազմերի բոլոր աշխատողները:

Հին ցարական բանակում զինվորները կոչվում էին «ստորին շին» և վոչ միայն վոչ մի իրավունքով չեին ոգտվում, այլ նրանց մինչև անգամ մարդ էլ չեին հաշվում: Նրանց և ազնվականների ու կալվածատերերի վորդիներ-ապաների մեջ գոյություն ուներ հսկայական անդունդ: Զինվորներն ապաների համար «անբան-անասուններ» էին: Զինվորների հետ բոլորը խոսում էին «դու»-ով, իսկ նրանք պարտավոր էին բոլորին «դուք» ասել:

Ցարական բանակում զինվորներին ծեծելը և նրանց քիթ ու պռունգ ջարդելը սովորական յերևույթ եր: Ազատության և գիտակցության զգացմունքը, վորը կար զինվորների մեջ, աշխատում էին բռնի ուժով խեղդել նրանց մեջ: Զինվորը «դատողություններ» անելու իրավունք չուներ, այլ պետք է անխոս կատարեր այն ամենը, ինչ վոր նրան հրամայում էին:

Մեր կարմիր-բանակայիններին համար սովորական դարձած ակումբները, թատրոնները, դասախոսությունները, ժողովները, զեկուցումները, դրքերը և թերթերը ծանոթ չեին ցարական բանակի զինվորներին:

Մեր կարմիր զորանոցը ցարական և բուրժուական կապարմանների միանգամայն հակապատկերն է: Մեր կարմիր զորանոցը, իսկական զինվորական ծառայության կանչված բանվորների և գյուղացիների համար ռազմա-քաղաքական մի դպրոց է:

Կարմիր բանակի և նավատորմիղի բոլոր մասերում գոյություն ունեն ակումբներ, դպրոցներ և լե-

նինյան անկյունները, վորտեղ կարմիր–բանակայիններ–ը ստանում են կրթություն, զանազան գիտելիքներ և խելացի կերպով զվարճանում են։

Բանվորական կառավարությունը ձեռք է առնում հնարավոր բոլոր միջոցները, վորպեսզի թեթևացնի գինվորական ծառայության հետ կապված բոլոր ծախքերի ծանրությունն աշխատավորների համար։ Բանվորներին և գյուղացիներին, յերկար ժամանակով խաղաղ աշխատանքից և ընտանիքից չկտրելու համար, ազդաբնակչության մի մասը գինվորական ծառայության կանչվում է յերկրային զորամասերը։

Այս զորամասերում ռազմական ուսուցումը կատարվում է վոչ թե ամբողջ տարվա ընթացքում, այլ ուսումնական հավաքույթների ժամանակ, վորոնք տեղի յեն ունենում տարեկան մեկ կամ յերկու անգամ և ամեն անգամ տևում են 2–3 շաբաթից վոչ ավելի։

Ուսումնական հավաքույթները տեղի յեն ունենում ըստ կարմիր բանակայինների բնակավայրերի և տարվա այնպիսի ժամանակ, յերբ գյուղացիները զբաղված չեն աշխատանքներից ավելի ազատ են։

Հասկանալի յե, ՝վոր յեթե մենք ամեն կողմերից շրջապատված չլինեյինք վոխերիմ թշնամիներով, մենք բոլորովին կըհրաժարվեյինք մշտական բանակից և ուսուցման կանցնեյինք բացառապես յերկրային զորամասերում։

Բայց դա չկա։

Արտասահմանյան կապիտալիստները, մեր յերկրից վռնդված կալվածատերերի և գործարանատերերի հետ միասին, ուշի–ուշով հետևում են մեզ և սպասում են միայն հարմար բոպեյին մեզ վրա հարձակ–

ելու համար։ Մինչև որ մեր յերկրային զորամասերը կը կարողանան հավաքվել, զինվել, պատրաստվել կռվի, և բուրժուաներին անհրաժեշտ հակագրոհը տալ, մեր Միությունը պետք է ունենա մշտական բանակ, թշնամիների առաջին գրոհին դիմադրելու համար։

Խորհրդային իշխանությունը հոգս է տանում լավացնելու ոչ միայն զինվորական ծառայողների դրությունը, այլ և ոչ պակաս չափով նա աշխատում և ապահովել զինվորական ծառայողների տնտեսություններն ու ընտանիքները։ Առանձնապես ուշադրություն և դարձնում զինվորական ծառայողների այն ընտանիքների վրա, որոնք չունեն աշխատանքի ընդունակ անդամներ։

Զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին բանվորա-գյուղացիական կառավարության տրված բազմատեսակ արտոնությունների և առավելությունների մեջ առաջին տեղը բռնում են հողագործության և գյուղատնտեսության վերաբերվող արտոնությունները, որովհետև մեր բանակի և նավատորմիղի մեծ մասը կազմված է աշխատավոր գյուղացիներից։

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՆԵՐՈՒՄ

Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողների համար

Այն ամբողջ ժամանակամիջոցում, յերբ զինվորական ծառայողը գտնվում է Կարմիր բանակում և նավատորմիղում իսկական զինվորական ծառայության մեջ,

նրա բաժին հողամասը մնում է այն աշխատավոր տնտեսությանը, որին նա մասնակցում է:

Իրենց աշխատանքով կամ միջոցներով տնտեսության աշխատանքներին, զինվորական ծառայության մեջ գտնվելու պատճառով չմասնակցող զինվորական ծառայողները այնուամենայնիվ իրավունք ունեն պահանջելու տնտեսության հողի վերաբաժանումը:

Աշխատավոր այն տնտեսություններին, որոնք ժամանակավորապես թուլացել են, զինվորական ծառայության մեջ գտնվող իրենց անդամների բացակայության պատճառով, թույլատրվում է կապալով տալ ամբողջ հողը կամ նրա մի մասը: Հողի կապալով տալը կատարվում է Խորհրդային Միության մեջ մտնող հանրապետությունների սահմանված պայմաններով:

Զինվորական ծառայողների ընտանիքներին ցույց է տրվում հետևյալ գյուղատնտեսական ոգնությունը.—

1) Սերմացվի փոխառությունը տրվում է առաջին հերթին և վորոշ արտոնություններով:
2) Բաց է թողնվում ձրիաբար կամ առանձին արտոնություններով գյուղատնտեսական ինվենտար և մեքենաներ:
3) Անտառը և շինարարության համար գործադրվող փայտեղենը բաց են թողնվում սրենքով սահմանված գնից 25–75 տոկոս զեղչով, իսկ բացառիկ դեպքերում ամենաչքավոր տնտեսություններին փայտեղենը և անտառը բաց են թողնվում բոլորովին ձրի:
4) Զինվորական ծառայողների ընտանիքներին, գյուղատնտեսական կենդանի կամ մեռյալ ինվենտարը բաց է թողնվում ապառիկ, առաջին

հերթին և ավելի արտոնյալ պայմաններով։

5) Զինվորական ծառայողի ընտանիքին պատկանող տավարի զուգումը (Случка) կատարվում է առաջին հերթին և եժան գնով (50 տոկոս զեղջով)։

6) Անասնաբուժական ոգնությունը հատկացվում է առաջին հերթին և ձրիաբար։

7) Անասունների համաճարակի դեմ կռվելու ժամանակ ապանված կամ պատվաստման հետևանքով սատկած անասունների արժեքի վարձատրությունը կատարվում է առաջին հերթին։

8) Հողազուրկ և սակավահող քաղաքացիների համար պետական հողային ունեցվածքից հողազուրկներին և սակավահողներին հատկացնելու, ինչպես նաև տեղափոխությունների ժամանակ զինվորական ծառայողների ընտանիքներին աշխատավորական ոգտագործության համար հողերը տրվում են առաջին հերթին։

9) Հողաշինարարական աշխատանքները վարձատրելիս զինվորական ծառայողների ընտանիքներին տրվում են արտոնյալ պայմաններ։

10) Զինվորական ծառայողների ընտանիքներին պատկանող աշխատավորական տնտեսությունների վերաբերող բոլոր վիճելի գործերը, հողային հանձնաժողովները քննում են շտապ կարգով։

11) Զինվորական ծառայողների կամ նրանց ընտանիքների կողմից հարուցված մեղմությունների հետևանքով հողաշինարարական զանազան գործերը (հողաբաժանություն, հողերի

գաումն выделение և այլն) քննվում են առաջին հերթին հանդեպ մյուս քաղաքացիների նման միջնորդությունների։

Զինվորական ծառայությունից պահեստ կամ ընդմիշտ արձակվելիս։

Այդ բոլոր արտոնություններով և առավելություններով ոգտվում են նաև ի պահեստ կամ ընդմիշտ արձակված զինվորական ծառայողները մի տարվա ընթացքում արձակվելու որից հաշված։

Բացի դրանից վարչական (начальствующий) կազմին պատկանող զինվորականները այսինքն հրամանատարները, քաղաշխատողները, բժիշկները, շտաբների և վարչությունների աշխատողները, որոնք կարմիր բանակում կամ նավատորմիղում ծառայել են հինգ տարուց վոչ պակաս, ինչպես նաև «Կարմիր Դրոշի» շքանշան ունեցողները զինվորական ծառայությունից արձակվելիս ձրիաբար բավարարվում են հողամասերով և շինությունների համար փայտեղենով։

Այս արտոնություններով ոգտվումեն միայն այն զինվորական ծառայողները, որոնք մինչև զինվորական ծառայության գալը պարապել են գյուղատնտեսությամբ իբրև աշխատավոր գյուղացիներ և չեն շահագործել ուրիշի աշխատանքը։ Վորոշ դեպքերում այս արտոնությունը կարողե տարածվել նաև մինչև բանակ գալը գյուղատնտեսությամբ չզբաղվող զինվորական ծառայողների վրա, յեթե նրանք բանակում կամ նավատորմղում ծառայել են վեց տարուց վոչ պակաս։

Ձրիաբար անտառ կամ հողամաս ստանալու համար այդ արտոնությունն ունեցող զինվորական ծառայող-

նելը պետք է համապատասխան միջնորդություն հարուցեն ապատվելու որից սկսած մի տարվա ընթացքում։

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՐԿԵՐ ՑԵՎ ՏՈՒՐՔԵՐ ՎՃԱՐԵԼԻՍ.

Արտոնություններ միասնական գյուղատնտեսական հարկ վճարելիս։

Միասնական գյուղատնտեսական հարկը 1923 թվին սահմանված է գյուղատնտեսությամբ զբաղվող ազգաբնակչության վրա մի շարք ուրիշ տուրքերի, ինչպես որինակ միասնական բնատուրքի, աշխատանքային վերադրական, գյուղատնտեսության բարձրացման համար գանձվող միանվագ հարկի և տեղական իշխանությունների կողմից նշանակվող տեղական հարկերի փոխարեն։

Միասնական գյուղատնտեսական հարկը մտցրված է, վորպեսզի հեշտացվի ազգաբնակչության համար հարկ վճարելը։ Խորհրդային Իշխանությունը այս հարկը սահմանելիս, միաժամանակ խստիվ կերպով արգելել է ուրիշ տեսակի բոլոր հարկեր գանձելը։

Միասնական գյուղատնտեսական հարկի որենքով կարմիր բանակի և նավատորմղի զինվորական ծառայողներին տրվում են հետևյալ արտոնությունները՝ տնտեսության մեջ ուտողների թիվը հաշվելիս հարկի քանակը վերուշելու նպատակով, տնտեսությունների մեջ մնող կարմիր բանակի և նավատորմղի բոլոր զինվորական ծառայողներին հաշվում են ուտողներ։ Վարչական կազմի զինվորական ծառայողներից յուրաքանչյուրը, ինչպես նաև ռազմական բարձրագույն դպրոցների ուսանողները հաշվառման ժամանակ,

հաշվում են յերկու ուտող, բացի զինվորական ծառայության մեջ գտնվողներից:

Ծառայությունն ավարտած և ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամկազմից յուրաքանչյուրը հաշվում և յերեք ուտող:

Իր կազմի մեջ, բացի զինվորական ծառայողներից, աշխատանքի ընդունակ ուրիշ տղամարդ չունեցող զինվորական ծառայողների ընտանիքները ազատվում են իրենց հասանելիք ամբողջ հարկի ու նրա տեղական հավելումները վճարելուց, յեթե հողի և հացի վերածված անասունների չափով տուրքադրվող մի ուտողին պակաս է ավյալ հանրապետության, նահանգի կամ շրջանի հատուկ հարկացուցակով վորոշված մեկ ուտողի (едок) ապահովության միջին չափից վոչ ավելի հող:

Նույն տնտեսությունները, աշխատանքի ընդունակ մեկ տղամարդ ունենալու դեպքում, ազատվում են հասանելիք հարկի և տեղական հավելումի կեսից, իսկ իրենց կազմի մեջ ծառայությունն ավարտած և ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամկազմ ունեցող տնտեսությունն ազատվում է միասնական գյուղատնտեսական հարկի յերկու յերրորդական մասից:

Զինվորական ծառայողների ընտանիքների այն տնտեսությունները, վորոնց յուրաքանչյուր մի ուտողին, ավյալ նահանգի կամ շրջանի տուրքադրվող հողի մի ուտողի միջին ապահովության չափից մեկ ու կեսից վոչ ավելի է ընկնում, ազատվում են տուրքի կեսից, յեթե ընտանիքում բացի զինվորական ծառայողներից աշխատանքի ընդունակ ուրիշ տղամարդիկ չլիան, իսկ այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
Ա 4484

են ծառայությունն ավարտած և ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամակազմից անձինք, ազատվում են միանական գյուղատնտեսական տուրքի յերկու յերրորդական մասից:

Անասնապահական, վոչ ցանքային այն տնտեսությունները, վորտեղ կան խոշոր յեղջյուրավոր անասունների վերածված 5 գլուխ անասունից վոչ շատ, ազատվում են գյուղատնտեսական տուրքն ու նրա հավելումները վճարելուց, յեթե ընտանիքի տնտեսության մեջ աշխատանքի բացի զինվորական ծառայողից ընդունակ ուրիշ տղամարդ չկա: Իսկ յեթե նման տնտեսությունների մեջ կա աշխատանքի ընդունակ մեկ տղամարդ, տնտեսությունները ազատվում են սահմանված տուրքի և նրա տեղական հավելումների միայն կեսից:

Ցանքային տնտեսություն վարող և ընտանի աշխատավոր անասուններից (լծկան տավարից) զուրկ զինվորական ծառայողների ընտանիքները բոլորովին ազատվում են գյուղատնտեսական տուրքից և նրա տեղական հավելումներից:

Վերոհիշյալ բոլոր արտոնությունները վերաբերում են մարտի 1-ից հետո բանակից արձակված զինվորական ծառայողներին համապատասխան դրույքային տարվա ամբողջ ընթացքում:

Այս բոլոր արտոնություններով ոգտվում են նաև պահեստում գտնվող այն հրամանատարները, քաղաշխատողները և վարչական կազմի ծառայողները, վորոնք կանչվում են աշխատավորության ռազմական պատրաստության համար իբրև հրահանգիչներ:

Այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մըտ-

նում են յերկրային զորամասերի վարժական հավաքույթներին կանչված զինվորական ծառայողները, վարժությունների և հավաքույթների զինվորական ծառայողի վերադառնալուց հետո, գյուղատնտեսական հարկը և նրա հավելումները վճարելու ժամանակ իրավունք ունեն ստանալ մի ամսով հետաձգում, և այդ ժամանակամիջոցի համար հարկին տուգանք չի ավելացվում:

Հասույթային–գույքային հարկ վճարելիս

Հասույթային–գույքային պետական հարկը մըցրվում է 1923 թվի հոկտեմբերի 1–ից, մինչև այդ, քաղաքներում գտնվող զանազան, ինչպես պետական նույնպես և տեղական հարկի փոխարեն:

Զինվորական ծառայողները յենթակա չեն հասույթային–գույքային պետական հարկին, բացի այն անձնավորություններից, որոնք իրենց ունեցած առևտրական, արդյունաբերական ձեռնարկություններից, չենքերից, կապիտալներից, կապալով վերցված ունեցվածքներից և ուրիշ վոչ աշխատավորական աղբյուրներից ստանում են յեկամուտ: Այս հարկից չեն ազատվում նաև այն անձնավորությունները, որոնք զբաղվում են մասնագիտական–տեխնիկական գիտելիքներ պահանջվող աշխատանքով և ազատ զբաղմունք ունեցողները, ինչպես որինակ՝ բժիշկները, ճարտարապետներն և այլն:

Աշխատավորության ռազմական պատրաստության համար իբրև հրահանգիչներ և հրամանատարական կազմի վարժական հավաքույթներին կանչված պահեստում գտնվող հրամանատարները ազատվում են հասույթային–գույքային հարկից, գրուգքային այն

կիսամյակում, վորի ընթացքում նրանք կանչված են։

Ցերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ հավաքությունների և վարժությունների կանչված զինվորական ծառայողների ընտանիքներն ոգտվում են մեկ ամիս հետաձգումով հասուցթային-գույքային հարկ վճարելու ժամանակ։

Հողա-յեկամտային տուրքը վճարելիս

Քաղաքների այն հողամասերից, վորոնք գրավված են զինվորական ծառայողների և նրաց ընտանիքների կողմից, չեն վերցնում հիմնական և լրացուցիչ հողա-յեկամտային տուրքեր, յեթե այդ հողամասերը մշակում են զինվորական ծառայողների ընտանիքներն իրենք՝ չգործադրելով վարձու աշխատանք։

Հողային յեկամուտ (ռենտա) կոչվում է այն յեկամուտը կամ վարկը, վորն ստացվում է ժամանակավորապես ոգտագործման համար տրված հողամասերից։

Այն բնակելի շենքերի տակ գտնված հողամասերից, վորոնք գրավված են զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների կողմից նույնպես չեն վերցվում վոչ հիմնական և վոչ էլ լրացուցիչ հողա-յեկամտային տուրքեր, յեթե այդ հողամասերը քրեհով չեն տրվում։

Հողա-յեկամտային տուրքից ազատելու կարգը սահմանում են նահանգային գործադիր կոմիտեները։

Գրասենյակային տուրք վճարելիս

Գրասենյակային տուրքը կառավարությունը սահմանել է, ժամանավոր անձնավորությունների խնդրելով՝ վկայականներ, վկայագրեր, տեղեկանքներ, քարտվածքներ, պատճեններ և նման փաստաթղթեր խոր-

հրդային հիմնարկությունները պատրաստելու համար։

Բոլոր զինվորական ծառայողները այս տուրքից ազատվում են իսկական զինվորական ծառայության հետ կապված բոլոր գործերի վերաբերյալ։

Այս հարկը վճարելուց ազատվում են նաև պահեստի այն հրամանատարները, որոնք կանչվում են իբրև հրահանգիչներ աշխատավորության ռազմական պատրաստության համար և հրամանատարական կազմի վարժական հավաքույթներին այս պարտականությունների կատարման ամբողջ ժամանակամիջոցում։

Դրոշմատուրք վճարելիս

Զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների այն միջնորդությունները, որոնք կապված են միանական գյուղատնտեսական հարկի գանձման հետ ազատվում են դրոշմատուրք վճարելուց։

Նույնպես ազատվում են դրոշմատուրքից զինվորական ծառայողների ազգականների այն միջնորդությունները, որոնք կապված են զինվորական ծառայողներին վերոնելու հետ։

Պահեստի հրամանատարները աշխատավորության ռազմական պատրաստության համար իբրև հրահանգիչներ և վարժական հավաքույթներին կանչվելիս ազատվում են իրենց և իրենց ընտանիքներին դրոշմատուրքից ազատվելու արտոնությունով, իսկական զինվորական ծառայության զինվորական ծառայողների հետ հավասար կերպով։

Պետական վերսրդական տուրք վճարելիս

Զինվորական բոլոր ծառայողները, ինչպես նաև պահեստում գտնվող այն հրամանատարները, որոնք

կանչվում են աշխատավորության ռազմական պատրաստության աշխատանքներին և վարժական հավաքույթներին բոլորովին ազատվում են պետական-վարչական տուրքից և նրա տեղական հավելումից։

Տեղային տուրքերի վերաբերյալ

Զինվորական բոլոր ծառայողները, իսկ պահեստի հրամանատարները միայն աշխատավորության ռազմական պատրաստության և վարժական հավաքույթների ընթացքում, ազատվում են գրանցման տուրք և հեծանիվների վրա դրվող հարկ վճարելուց։ Նրանց ընտանիքները նույնպես ազատվում են գրանցման տուրքից։

Բացի դրանից, զինվորական ծառայողների ընտանիքներն ազատվում են հետևյալ տեղական հարկերից՝

1) Քաղաքներում զինվորական ծառայողների ընտանիքներին պատկանող շենքերի հարկից, եթե այդ շենքերը զբաղեցրել է միայն զինվորական ծառայողի ընտանիքը և քրեհով չեն տրվում։

2) Քաղաքներում գտնվող արդյունաբերական այգիների և բանջարանոցների հարկից, եթե զինվորական ծառայողի ընտանիքին պատկանող այգին կամ բանջարանոցը մշակում և ոգտագործում են ընտանիքի անդամները, չգործադրելով վարձու աշխատանք և եթե ընտանիքին հատնում է 120 քառ. սաժենից վոչ ավելի։

3) Ձիերի և նատելու կառքերի հարկից, մի ընտանիքում ազատվելու յենթակա յե միայն մեկ ձի և այն էլ այն դեպքում, երբ ձին կառքին լծվող ձիերի թվին չի պատկանում և ոգտագործվում է բացառապես զինվորական ծառայողի տան տնտեսության համար։

4) Անասունների և ընտանի մյուս կենդանիների հարկից, ըստ վորում տուրքից ազատվելու յենթակա յեն մեկ ընտանիքում մի գլուխ խոշոր և 3 գլուխ մանր յեղջյուրավոր անասուններ:

Տեղական այս բոլոր տուրքերից ազատվում են նաև զինվորական ծառայությունից տուն արձակված-ների ընտանիքները մեկ տարվա ընթացքում, հաշված տուն արձակվելու որից ինչպես, նաև պահեստի այն հրամանատարները, վորոնք կանչվում են աշխատավորության ռազմական պատրաստության և վարժական հավաքույթներին, դրույքային այն շրջանում, վորի ընթացքում նրանք կանչված են:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զորակոչով զինվորական ծառայության մեջ գտնվողների համար

Զինվորական ծառայության կանչվելու մոմենտին զինվորական ծառայողի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները, յեթե լրացել է իրենց զբաղեցրած շենքերի վարձման պայմանագրերի ժամանակամիջոցը, կարող են վերանորոգել այդ պայմանագիրը, նույն պայմաններով, ինչպես նա սկզբում կնքված է յեղել, անկախ շենքերը վարձու տվողի համաձայնության:

Պայմանագրի գործողությունը կարող է կանգնեցնել միայն վարձող կողմը (զինվորական ծառայողի ընտանիքը), բացի որենքով ճիշտ վորոշված մի քանի դեպքերից, որինակ, յերբ վարձողը դիտամամբ կամ անփութության հետևանքով փչացնում է շենքը, յերբ վարձողն իր նիստ ու կացով խանգարում է շենքի մյուս բնակիչներին և իր հետ կենակցելը դարձնում է ան-

հնարին, յերբ վարձողը չի վճարում տան քրեհը, չի կատարում իր վրա դրված, շենքի վերաշինությունը և այլն:

Բնակարանային վարձը վորոշելիս, զինվորական ծառայության կանչված խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները հավասարվում են պետական ձեռնարկությունների ու հիմնարկությունների բանվորներից և ծառայողներից մինիմալ (ամենաքիչ) աշխատավարձ ստացողներին: Տեղական գործադիր կոմիտեներին իրավունք է տրվում նրանց բնակարանային վարձից բոլորովին ազատել:

Զինվորական ծառայողների ընտանիքները վարչական կարգով (այսինքն պետական մարմինների վորոշմամբ, առանց դատարանի) կարող են դուրս հանվել պետական հիմնարկություններին կամ ձեռնարկություններին պատկանող բնակարաններից միայն ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը:

Այս դեպքում հեռացնող հիմնարկությունը պետք է տրամադրի զինվորական ծառայողի ընտանիքին բնակելու համար ազատ և պիտանի տարածություն և փոխադրական միջոցներ:

Ռազմական և ռազմա-ծովային դպրոցներ իրենց կամքով գնացող կամ գործուղվող բանվորների և ծառայողների զբաղեցրած բնակարանը մնում է նրանց տրամադրության տակ 3 ամսվա ընթացքում հաշվված դնալու կամ գործուղվելու որից:

Գործուղվածների ընտանիքներին վերապահվում է բնակարանից ընդհանուր կարգով ոգտվելու իրավունքը: Գործուղվածների խնամքի տակ գտնվող անձնավորությունները, իրենց զբաղեցրած բնակարա-

նի համար վարձը վճարում են, այնպես, ինչպես զինվորական ծառայողի ընտանիքի անդամները:

Զինվորական ծառայության մեջ վոչ զորակոչով գրտնվող վարչական կազմի համար

Զինվորական ծառայության մեջ վոչ զորակոչով գտնվող հրամանատարները, քաղ-աշխատողները, բժիշկները, շտաբների և վարչությունների աշխատակիցները, ինչպես նաև նրանց ընտանիքները վարչական կարգով բնակարաններից կարող են հեռացվել միայն առանձին դեպքերում և բնակվելու համար պետական ազատ տարածություն և փոխադրական միջոցներ ստանալու պայմանով:

Կարմիր բանակի և նավատորմիղի պատասխանատու աշխատողները իրավունք ունեն լրացուցիչ կերպով ստանալ 20 քառ. արշին տարածություն, վորի վարձը հաշվում է, վորպես հիմնական տարածության մի մասի վարձ: Պատասխանատու աշխատողներ հաշվվում են գնդերի և նրանց հավասարվող շարային առանձին մասերի հրամանատարները և կոմիսարները, ինչպես նաև ամբողջ բարձր (ВЫСШИЙ) վարչական կազմը:

Ռազմական և ռազմա-ծովային դպրոցներ զործուղված հրամանատարների, քաղ-աշխատողների և վարչական կազմի մյուս անձնավորությունների զբաղեցրած բնակարանները մնում են նրանց տրամադրության տակ 3 ամսվա ընթացքում, զործուղման որից հաշված, իսկ նրանց ընտանիքներն իրավունք ունեն ոգտվել բնակարաններից ընդհանուր կարգով:

Զինվորական ծառայությունից արձակվելիս

Զինվորական ծառայությունից պահեստ կամ բո-

լրովին արձակվածներին, արձակվելու որից հաշված ամենաուշը 6 ամսվա ընթացքում ընտանիքի բնակավայրերը վերադառնալիս, պետք է տրվի բնակելի տարածություն այն տան մեջ, վորտեղ ապրում և ընտանիքը, առաջին հերթին և նրանց առավելություն պիտի տրվի մյուս քաղաքացիների նկատմամբ:

Զինվորական ծառայությունից պահեստ կամ բուլորովին արձակվածները, վերադառնալով իրենց նախկին բնակավայրը, վորտեղ նրանք ապրում էին մինչև զինվորական ծառայության կանչվելը, իրավունք ունեն 6 ամսվա ընթացքում, արձակման որից հաշված, բնակելի տարածություն ստանալ առաջին հերթին, ըստ իրենց ընտանիքների անդամների թվի:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՅԹԱՆ ԱՍՊԱՐԵԶՆԵՐՈՒՄ

Զինվորական ծառայության կանչվելիս

Կարմիր Բանակի և նավատորմիղի շարքերը զինվորական ծառայության գալիս, ինչպես նաև զորահավաքի ժամանակ, բանվորները և ծառայողները, յերբ թողնում են իրենց աշխատանքը, լրիվ կերպով ստանում են վերջնական ամբողջ հաշիվը, մինչև աշխատանքի փաստորեն դադարեցման որը ներառյալ: Բացի դրանից նրանք ստանում են նպաստ հեռանալու առթիվ յերկու շաբաթվա միջին աշխատավարձի չափով:

Յեթե կանչվողը զինվորական ծառայության համար ճանաչվում է անպետք կամ հետաձգումն (отсрочка) է ստանում, վերադառնալով ծառայության հին տեղը, ստանում է իր հին պաշտոնը:

Կարմիր Բանակի և նավատորմիղի շարքերը կանչված ընտանիքին, յեթե կանչվողը յեղել է ապահովագրված, իրավունք է վերապահվում մի ամսվա ընթացքում, կանչվելու որից հաշված, ոգտվել գոյություն ունեցող որենքներով սահմանված լրացուցիչ բոլոր նպաստներով՝ այսինքն, նորածինին խնամելու համար տրվող նպաստ, յերեխային կերակրելու համար ամսական նպաստ, և ապահովագրվածների խնամքի տակ գտնվող ընտանիքի աշխատանքի անընդունակ անդամների թաղման նպաստ: Յերեխայի կերակրման համար որենքով սահմանված նպաստը տրվում է ծննդյան 9 ամսվա ընթացքում: Այս լրացուցիչ նպաստները տրվում են ապահովագրական այն դրամարկղից, որին զինվորական ծառայության կանչվածը մատակցել եր, կամ որից նա՝ իբրև անգործ, նպաստ եր ստանում մինչև զինվորական ծառայության կանչվելը:

Զինվորական ծառայողներից թույլ գյուղական տնտեսություն ունեցողները, բանվորական ուժ վարձելու ժամանակ, սոցիալ-ապահովագրական ֆոնդի անդամավճարները մուծելու ժամանակ ոգտվում են զանազան արտոնություններով, որոնք սահմանում են նահանգային կամ նրանց հավասարվող գործադիր կոմիտեները:

Այս գործադիր կոմիտեներին իրավունք է վերապահվում շատ ծանր դրության մեջ գտնվող գյուղական տնտեսություններին բոլորովին ազատել սոցիալ-ապահովագրական ֆոնդի անդամավճարներ մուծելուց:

Զինվորական ծառայությունից արձակվելիս

Զինվորական ծառայությունից պահեստ կամ բո-

լորովին արձակվածներին իրավունք և տրվում ցուցակագրվել միջնորդ-բյուրոներում (посреднические бюро։)

Մշտական կամ հասարակական աշխատանքների ուղարկվելու դեպքում, զինվորական ծառայությունից արձակվածը հավասարվում և արհեստակցական միությունների անդամներին։ Հատուկ դեպքերում Կարմիր բանակից և նավատորմից արձակվածները կարող են ուղարկվել հասարակական աշխատանքների կամ զանազան կոլեկտիվներ առանձին առավելություններով արհեստակցական միությունների անդամների հանդեպ։

Միլիցիայի, անտառապահների, ֆինանսական հիմնարկությունների և արդելանների պահապանների կազմը լրացնելու դեպքերում, զինվորական ծառայությունից արձակվածներն այդ հիմնարկությունները համապատասխան պաշտոնների ուղարկվում են առաջին հերթին և վորոշ առավելություններով արհեստակցական միությունների անդամների հանդեպ։

Վորոշ առավելություններով անդորձների և արհեստակցական միությունների անդամների հանդեպ՝ Կարմիր բանակից և նավատորմից արձակվածները միջնորդ բյուրոների միջոցով ուղարկվում են նույնպես և՝ Ս. Խ. Հ. Միության և Խորհրդային առանձին հանրապետությունների Գործադիր Կոմիտեներին և ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, Պետական Միացյալ Քաղաքական Վարչության (Օ. Գ. Պ. Ս.), Ռազմական և արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատներին յենթակա հիմնարկությունները և նրանց տեղական-մարմինները, համապատասխան պաշտոնների։

Միջնորդ բյուրոների վրա պարտականություն և դրվում խոտիվ հետևել, վորպեսզի հիշյալ մարմիններից ստացված պահանջի դեպքերում, առաջին հերթին աշխատանքի ուղարկվեն զինվորական ծառայությունից արձակվածները:

Կարմիր Բանակից և Նավատորմղից արձակվածներին իրավունք և վերապահվում ընդունվել բոլոր հիմնարկությունները և ձեռնարկությունները գրանցման հերթական կարգով:

Մինչև զինվորական ծառայության գալը, վարձու աշխատանքով զբաղվողները, զինվորական ծառայությունից պահեստ կամ բոլորովին արձակվելիս, իրավունք ունեն ստանալու գործազուրկներին տրվող նպաստ, անկախ նրանց աշխատանքային ստաժից:

Գործազուրկների համար կազմակերպված հանրակացարաններից և ճաշարաններից Կարմիր-Բանակից և Նավատորմիղից արձակվածներն ոգտվում են վորոշ առավելություններով հանդեպ մնացած գործազուրկների, յեթե նրանք գրանցված են միջնորդ. բյուրոներում:

Այս բոլոր արտոնություններով և առավելություններով զինվորական ծառայությունից պահեստ կամ բոլորովին արձակվածները ոգտվում են միայն այն դեպքում յեթե նրանք միջնորդ (посредническое) բյուրոներում գրանցվել են, առաջին անգամ զինվորական կոմիսարիատում հաշվի առնելու որից մի տարի չանցած:

Կարմիր բանակից և Նավատորմղից արձակվածներից նրանք, վորոնք քաղաքացիական ծառայության մտնելու վերաբերյալ իրենց իրավունքը մի անգամ

արդեն ոչ-ապարդիլ են, մինչորդ բյուրոյին յերկրորդ անգամ դիմելու դեպքում դրանցվում և աշխատանքի ուղարկվում են մյուս գործարարների հետ միասին ընդհանուր կարգով։ Բացառություններ թույլատրվում են միայն այն արձակվածների վերաբերյալ, որոնք զինվորական ծառայությունից անմիջապես հետո ստացած առաջին աշխատանքից արձակվել են չանցած վեց շաբաթ։

Յերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ կամ մինչզինակոչային պատրաստության կանչված բանվորների և ծառայողների համար

Կարմիր Բանակի յերկրային զորամասերի նախնական պարապմունքներին կանչված, ինչպես նաև յերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ ընդունված բանվորները և ծառայողները վարժությունների և հավաքույթների ընթացքում պահպանում են իրենց պաշտոնները ծառայության, կամ աշխատանքի նախկին տեղերում։

Յերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ գտնվող բանվորները և ծառայողները վարժությունների կամ հավաքույթների շրջանում, մի տարվա ընթացքում մեկ ամսից վոչ ավել, պահպանում են միջին աշխատավարձի յերկու յերրորդական մասն ըստ նրանց պաշտոնների և ծառայության տեղերի, միայն այն դեպքում, յեթե նրանց հասակակիցներն արդեն արձակված են Կարմիր Բանակից կամ նավատորմիղից։

Իսկ յեթե նրանց հասակակիցները գտնվում են իսկական զինվորական ծառայության մեջ կամ զինվորական պարտականություն կատարելու դեռևս կանչված չեն, այս դեպքերում յերկրային զորամասերը կանչված

բանվորները և ծառայողները վարժությունների կամ հավաքույթների շրջանում իրենց ռոճիկներն ըստ ծառայության տեղի չեն պահպանում։ Նման դեպքերում նրանք ստանում են յերկշաբաթվա նպաստ իրենց ծառայության տեղից։

Մինչ զինակոչային պատրաստության կանչված բանվորները և ծառայողները զինվորական վարժությունների անցնելու շրջանում պահպանում են իրենց պաշտոնները և ամբողջ ռոճիկն ըստ միջին աշխատավարձի։

Բոլոր այս իրավունքներով ոգտվում են նաև ժամանակավոր և սեզոնային բանվորները և ծառայողները մինչև սեզոնային կամ ժամանակավոր այն աշխատանքի վերջանալը, վորով նրանք զբաղված են յեղել։

Ցերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ կամ մինչ զինակոչային պատրաստության կանչված բանվորները և ծառայողները, նրանց հիմնարկություններում կամ ձեռնարկություններում հատիքների (շտատների) կրճատման ժամանակ, աշխատանքից արձակվել կարող են միայն իրենց պաշտոնների վերացման դեպքում։

Ցերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ կանչված գործազուրկներին, վորոնք գործազրկության պատճառով ստանում են ապահովագրական դրամարկղներից նպաստ, կամ ունենալով նպաստ ստանալու իրավունք, չեն ստանում հասարակական աշխատանքներում գտնվելու պատճառով, վարժությունների կամ հավաքույթների ժամանակ, մի տարվա ընթացքում մեկ ամսից վոչ ավել պետք է տրվի գործազրկության նպաստ, յեթե նրանց հասակակիցներն ար-

դեն արձակված են զինվորական ծառայությունից։

Հավաքույթում գտնված միջոցին նպաստ ստանալու ժամանակը չի հաշվվում նպաստի համար սահմանված վերջնակետի մեջ. (նպաստն ստացվում է այդ վերջնակետից դուրս)։

Արտազորային (զորքից դուրս) կարգով մինչ զինակոչյան նախապատրաստության կանչված այն զործաղուրկները, որոնք ապահովագրական դրամարկղից գործազրկության առթիվ նպաստ են ստանում, շարունակում են ստանալ այդ նպաստն ուսուցման ամբողջ ժամանակամիջոցում։

Ռազմական նախապատրաստության միջոցին ստացած նպաստի ժամանակը հաշվվում է նպաստ տալու համար սահմանված վերջնակետի մեջ։

Յերկրային զորամասերին կից նախնական պատրաստություն կանչվողների ընտանիքները, յեթե կանչվածը ապահովագրված է յեղել, պահպանում են որենքով սահմանված լրացուցիչ բոլոր նպաստները իրավունքը։

Բժշկական ոգնություն։

Հիվանդ և վիրավոր զինվորական ծառայողները ոգտվում են ձրիաբար բժշկական ոգնությամբ, որը տրվում է նրանց թե ռազմա-սանիտարական և թե քաղաքացիական բուժական հիմնարկություններում։

Բուժավայրերի (կուրորտի) բժշկության կարիք ունեցող հիվանդ զինվորական ծառայողները ձրիաբար բժշկվում են զինվորական բուժավայրերի կայաններում (военно-курортные станции)։

Նրանց բուժավայրերի կայան տեղափոխելու և

վերաբերմամբ ծախսը կատարվում է ի հաշիվ առողջապահության։

Վարչական կարգով ապահովագրված զինվորական ծառայողները քաղաքացիական բուժավայրերում բժշկվում են մյուս բոլոր ապահովագրվածների հետ ընդհանուր հիմունքներով։

Ապահովագրված զինվորական հիվանդ ծառայողներին քաղաքացիական բուժավայրերից ոգտվելու համար տրվում է առաջին կարգի արտոնություն։

Զինվորական ծառայողների ընտանիքների հիվանդ անդամներն իրավունք ունեն տեղավորվելու հիվանդանոցներում, մանկաբարձատներում և այլ նման հիմնարկություններում առաջին հերթին։

Զրի բժշկական ոգնություն քաղաքացիական բուժական հիմնարկություններում նրանց տրվում է նույն կարգով, ինչպես և ապահովագրված ծառայողների և բանվորների ընտանիքներին։

Զինվորական ծառայությունից հիվանդության կամ հաշմանդամության պատճառով արձակվածները, քաղաքացիական բուժական հիմնարկություններում ձրի բժշկությամբ և պրոտեզներով (протез) ոգտվում են մյուս ապահովագրվածների հետ հավասար հիմունքներով։

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Զորակոչով զինվորական ծառայության մեջ գտնվողների համար

Զինվորական պարտականություն կատարելու համար ծառայության կանչված զինվորական ծառայողները կարճառև, հիվանդության պատճառով և առանձին հարկելի դեպքերում, արձակուրդներ ստանալիս

իրավունք ունեն փոխադրվել արձակուրդի վայրը և հետ վերադառնալ, «պահանջագրերով» (по требованию)ի հաշիվ ռազմ-վարչության ապառիկ, մարդատար գնացքներում և ջրային ճանապարհներով:

Զինվորական ծառայողի մահվան կամ ծանր հիվանդության դեպքերում նրա ընտանիքն ունի արտոնյալ տեղափոխության իրավունք յերկաթուղիով և ջրային ճանապարհներով, «պահանջագրերով», ըստ զինվորական տարիֆի, վճարելով կանխիկ դրամ իր սեփական միջոցներից մոտավորապես 75 տոկոս զեղջով:

Այս իրավունքով կարող է ոգտվել զինվորական ծառայողի ընտանիքի միայն մեկ անդամը, ըստ վորում զինվորական ծառայողի հիվանդության դեպքում, մեկ անդամից վոչ շատ հիվանդության ամբողջ ժամանակամիջոցին:

Այս արտոնությունը չի տարածվում արագությունների, պլացկարտների, փափուկ վագոնների, նախկին միջազգային ընկերության վագոնների նկատմամբ և նման այլ դեպքերում վճարելու ժամանակ, վորովհետև այդ վճարումները կատարվում են յերկաթ-գծային ընդհանուր տարիֆով:

Մահվան դեպքում ընտանիքի տեղափոխության իրավունքը պահպանվում է 3 ամսվա ընթացքում՝ հաշված զինվորական ծառայողի մահվան որից:

Այս ժամանակամիջոցում զինվորական ծառայողի և նրա ընտանիքի գույքը (տան իրերը) նաև կարող են ուղարկվել զինվորական ծառայողի ընտանիքի ընտրած նոր բնակավայրը:

Այս գույքը փոխադրվում է «պահանջագրով» («по требование»), փոքր արագությամբ, ապառիկ,

Ի հաշիվ ռազմ–վարչության և քառասուն ու հինգ տիթից ծանր չպետք է լինի:

Զինվորական ծառայողներին արձակուրդներ արձակելիս, ինչպես և նրանց ընտանիքների անդամների փոխադրությունների ժամանակ, թույլատրվում է լրերը փոխադրել, հաշվելով փոխադրող յուրաքանչյուր մեկ անձին 1 փութ, «պահանջագրով» (по требование) փոքր արագությամբ, և կանխիկ վճարով ըստ զինվորական տարիֆի:

Զինվորական ծառայության մեջ վոչ զորակոչի կարգով գտնվող վարչական (начальствующие) կազմի համար

Հրամանատարները, քաղ–աշխատողները և վարչական կազմի մյուս անձինք, սանատորիաները, կուրորտները և կլիմայական բժշկությունների համար Ռազմ–վարչությանը (военное ведомство) հատկացված տեղերը ուղեորվելիս, ինչպես և հիվանդության պատճառով, կլիմայական բժշկության համար արձակուրդ դնալիս, փոխադրվում են «պահանջագրերով» ի հաշիվ Ռազմ–վարչության–ապատիկ: Հատուկ հարգելի դեպքերում և արձակուրդներ դնալիս, փոխադրությունը կատարվում է «պահանջագրով», կանխիկ հաշվով ըստ զինվորական տարիֆի:

Աշխատանքի վայրը փոխվելու և զորամասը կամ հիմնարկությունը մի վայրից ուրիշ վայր տեղափոխվելու դեպքերում, վարչական կազմի անձինք իրավունք ունեն փոխադրել իրենց ընտանիքները յերկաթ–գծով և ջրային ճանապարհներով ապատիկ, Ռազմ–վարչության հաշվին, «պահանջագրերով»: Այս իրավունքով վարչական կազմի զինվորական ծառայողի ընտանիքը

կարող է ոչ ավելի միայն մեկ ամսվա ընթացքում, զինվորական ծառայողի փոխադրվելու որից հաշված:

Վարչական կարգի զինվորական ծառայողի ընտանիքը, զինվորական ծառայողի մահվան դեպքում նաև, ունի փոխադրության այլոպես արտոնյալ իրավունք մինչև իր ընտրած բնակավայրը, յեթե զինվորական ծառայողը ծառայել է Կարմիր Բանակում և նախատարմամբ 6 ամսից վոչ պակաս, և յեթե ընտանիքը մինչև այդ ապրել է նրա հետ միասին մեկ վայրում:

Փոխադրական փաստաթղթերը ստանալու համար, զինվորական ծառայողի ընտանիքը պետք է միջնորդություն հարուցի, զինվորական ծառայողի մահվան որից հաշված 3 ամսվա ընթացքում: Այս ժամանակամիջոցը անցկացնելուց հետո զինվորական ծառայողի ընտանիքը կորցնում է ձրի փոխադրության իրավունքը:

Վարչական կարգի զինվորական ծառայողների ընտանիքները, յերկաթ-ղծով և ջրային ճանապարհներով փոխադրության արտոնյալ իրավունք, պահանջագրերով իրենց սեպհական դրամարներից կանխիկ վճարով բաց զինվորական տոմսերի, ունեն հետևյալ դեպքերում.

ա) ընտանիքի կերակրողի պաշտոնավայրը փոփոխվելու, յերբ ընտանիքի կերակրողը ստանում է նոր նշանակումներ, փոխադրություններ և գործուղումներ (командировки) 6-ամսից վոչ պակաս ժամանակով և յեթե այս բոլոր փոփոխությունների հետևանքով զինվորական ծառայողը փոխում է իր ծառայության վայրը:

բ) բուժավայրեր, սանատորյաններ և ռազմ-վարչության մոտակա բժշկական հիմնարկներ ուղարկվելիս:

դ) Զինվորական ծառայողի մահվան կամ ծանր հիվանդության դեպքերում, յեթե ընտանիքը մինչև այդ չեր ապրում զինվորական ծառայողի հետ:

Վարչական կարգի զինվորական ծառայողի սեփական դուքը, 40 վիթից վոչ ավել, պահանջարկերով փոքր արտադրությամբ, ռազմ-վարչության հաշվին ապառիկ, փոխադրվում և հետևյալ դեպքերում.—

1) Զինվորական ծառայողի ծառայության վայրի փոխվելու հետևանքով, ընտանիքը նոր պաշտոնավայրը տեղափոխվելիս, ընտանիքի կերակրողի հեռանալու որից հաշված մեկ ամիս ժամանակամիջոցում, և

2) Զինվորական ծառայողի մահվան պատճառով նրա ընտանիքի ընտրած նոր բնակավայրը տեղափոխվելիս, իսկ

3) Զինվորական ծառայողի պաշտոնավայրը նրա ընտանիքը տեղափոխվելիս, փոխադրությունը կատարվում և «պահանջարկով» ըստ զինվորական տարիֆի կանխիկ վճարով:

Այդ դեպքերում փոխադրվում և նաև զինվորական ծառայողների դուքը, հաշվելով ընտանիքի յուրաքանչյուր չափահաս մեկ անդամին 10 վիթից վոչ ավել և 5-ից—14 տարեկան յուրաքանչյուր մեկ յերեխային 5 վիթից վոչ ավել, այնպես, վոր փոխադրվածի ընդհանուր քաշը 60 վիթից ավել չլինի, հաշվելով նաև զինվորական ծառայողի իրեն սեփական դուքը:

Դուքի այս քանակը փոխադրվում և «պահանջարկով» փոքր արտադրությամբ, ըստ զինվորական տարիֆի կանխիկ հաշվով:

Յեթե զինվորական ծառայողը բժշկվելու համար և արձակուրդների ժամանակ ճանապարհվում և, կամ

թե յերբ զինվորական ծառայողների ծանր հիվանդության, մահվան դեպքում ընտանիքը ուղևորվում և գնալ նրա բուժավայրը կամ պաշտոնատեղին, բայց այդ դեպքերում թե զինվորական ծառայողի և թե նրա ընտանիքի գումարը տեղափոխվում և «պահանջագրերով», փոքր արագությամբ, կանխիկ վճարով բաց տարիֆի, հաշված տեղափոխվող 5 տարեկանից բարձր հատակ ունեցող յուրաքանչյուր անձին 1-ական փութ:

Զինվորական ծառայությունից արձակվելիս:

Զինվորական ծառայությունից պահեստ կամ բարբրովին արձակվելիս, զինվորական ծառայողներն իրավունք ունեն տեղափոխվել յերկաթ-գծային և ջրային ճանապարհներով, «պահանջագրերով», ապատիկ հհաշիվ ռազմ-վարչության:

Ծառայության մեջ վոչ զորակոչի կարգով գտնվող, վարչական կազմի (начальствующий состав) զինվորական ծառայողների արձակվելու դեպքում նրանց ընտանիքները իրավունք ունեն տեղափոխվել նրա մշտական կամ նոր ընտրած բնակավայրը, կանխիկ վճարող բաց զինվորական տարիֆի:

Զինվորական ծառայությունից արձակվածների իրենց բնակավայրը տեղափոխելու դեպքում, զինվորական ծառայողի տեղհատկան գումարը 40 փթից վոչ ավել, փոխադրվում և «պահանջագրով», փոքր արագությամբ ի հաշիվ ռազմ-վարչության ապատիկ. իսկ նրանց ընտանիքների գումարը, հաշված 10 փթից վոչ ավել ընտանիքի հատակավոր յուրաքանչյուր մեկ անդամին և 5 փթից վոչ ավել մեկ յերեխային (5-ից-14 տարեկան), Իսկ ընդամենը վոչ ավել 60 փթից, հաշվելով նայել զինվորական ծառայությունից արձակվածի

սեփական դուքը, փոխադրվում և բառ-զինվորական տարիքի կանխիկ վճարով:

Զինվորական ծառայությունից պահեստ կամ բուլորովին արձակվածները իրենց ընտրած բնակավայրը փոխադրվելու, արտոնյալ փոխադրության իրավունք ունեն մի մխիթարի զորամասի ցուցակներից դուրս գրվելուց հաշված, յերեք ամսվա ընթացքում:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Զինվորական ծառայող ընտանիքի անչափահաս անդամները, մնացած պայմաններում նրանց հավասարվող ուրիշ քաղաքացիների յերեխաների հանդեպ ունեն առավելություններ մանկապարտեզներ, դպրոցներ, մանկատներ և դաստիարակչական նման ուրիշ հիմնարկություններ ընդունվելիս:

Այդ հիմնարկությունները ընդունվում են նաև առաջին հերթին զինվորական ծառայողների կիսավորը յերեխաները, կամ վորը քույրերն ու յեղբայրները, յեթե նրանք մինչև զինվորական ծառայողների բանակ դալը լուսին գտնվում էին նրանց խնամքի տակ:

Զինվորական ծառայողների ընտանիքների անչափահաս անդամները և վորբերը, առաջին, յերկրորդ տարիքի կամ նրանց համապատասխան ուրիշ դասերն ընդունվում են առաջին հերթին:

Հրամանատարների, քաղ-աշխատողների և վարչական կազմի (начальствующий состав) մյուս աշխատողների յերեխաներն իրավունք ունեն ընդունվել բարձրագույն դպրոցներն առաջին հերթին:

Զինվորական ծառայողների ընտանիքների անդամները, բոլոր դպրոցներում և ավարելիս, ազատվում են ուսման վճարից և դպրոցական պիտույքներով ու դասագրքերով բավարարվում են առաջին հերթին:

Պաշտոնական պարտականություններից ազատ ժամանակ, զինվորական ծառայողները կարող են ուսանել հատակագծերների դպրոցներում կամ դասընթացներում, բանվորական ֆակուլտետներում և բարձրագույն դպրոցներում, վորտեղ մանելու համար պետք է ստանալ իրեն վարչության (начальство) թույլտվությունը: Զինվորական ծառայողները բոլորովին ազատվում են ուսման վճարից:

Խորհրդային Հանրապետությունների Լուսավորության Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահված սահմանել արտոնյալ պայմաններ դպրոցներ մանել ցանկացող զինվորական ծառայողների համար:

ՓՈՍՏԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զինվորական ծառայության մեջ գտնվող բոլոր զինապարտները կարող են ուղարկել փոստով ձրիաբաք ամսական 3 հատ հասարակ փակ նամակներ, յուրաքանչյուրի քաշը 20 գրամից վոչ ավել կամ 3 հատ փոստային բաց նամակներ:

Նույնպես իրավունք է տրվում ուղարկել ճանապարհածախսի կես արժողությամբ, ամսական 2 անգամ փաթեթներ (посылки) յուրաքանչյուրը 20 գրվանքայից վոչ ծանր:

Նամակը ձրիաբար ուղարկելու համար, զինվորական ծառայողը նամակը հանձնում է գրամատին, վոր-

տեղ ինքով հատատեղուց հետո, ցրիչ մատյանի մի-ջոցով հանձնվում է փոստը:

Փաթթոցը փոստը հանձնելիս, զինվորական ծառայողները պետք և ներկայացնեն իրենց կարմիր բանակային գրքույկները, որտեղ նշանակվում և փաթթոց ուղարկվելը:

20 դրամից վոչ ծանր հատարակ փակ կամ բաց նամակները, որոնք հացեագրված են բանակում ծառայող զինապարտին անկախ թե ո՞վ և ուղարկում, փոստը հանձնում և ձրիաբար: Սակայն անհրաժեշտ և, որպեսզի զինվորական ծառայողին ուղարկվող նամակն անպայման հացեագրված լինի այն հիմնարկութեանը կամ գրամատին, որտեղ գտնվում և զինվորական ծառայողը և հացեյում հիշատակված լինի զինվորականի պաշտոնը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Առողջության վերականգնման համար

Կարմիր Բանակի և նավատորմիղի զինվորական ծառայողներին կարող են տրվել դրամական նպաստներ առողջությունը վերականգնելու համար, ծանր հիվանդությունից, վիրավորվելուց և սալաջարդից (կոնտուզիայից) բժշկվելուց հետո, ինչպես նաև սանատորիայից կամ հիվանդանոցից դուրս գնալուց հետո, ստացած խեղումներից և անմիջական ծառայությանը վերաբերվող լարված աշխատանքի հետևանքով ստացված հոգնածությունից:

Առողջության վերականգնման համար տրվող նպաստի մեծագույն չափը 20 ռուբլուց ավել չէ:

Այս նպաստն ստանալու համար զինվորական ծառայողները պետք և ներկայացնեն համապատասխան

բժշկական հանձնաժողովներից ստացած վկայականներ:

Գույքի վերականգնման համար

Պատերազմական գործողությունների ընթացքում կամ նրանց հետևանքով, վնասված գույքի անհրաժեշտ մասը վերականգնելու համար տրվում է նպաստ 20 ռուբլու սահմաններում:

Գույքի անհրաժեշտ մասը վերականգնելու համար տրված միջնորդությունը, զինվորական ծառայողը պետք է անպատճառ կցի արձանագրություններ վնասման հանգամանքների և վնասվածի արժեքի մասին:

Թաղման համար

Զինվորական ծառայողների խնամքի տակ գտնվող ընտանիքների չապահովագրված անդամների թաղման համար տրվում է դրամական նպաստ:

Այս նպաստը տրվում է նույն չափով, որչափ նման դեպքերում տալիս են տեղական ապահովագրական դրամարկղները—ապահովագրվածներին:

Զինվորական ծառայողները, ապահովագրվածների թաղման նպաստի ճիշտ քանակն իմանալու համար, պետք է դիմեն տեղական ապ—ապահովագրական մարմինների դրամարկղներին յուրաքանչյուր ամսի 1-ին և 15-ին:

ԴԱՏԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական Գործադիր Կոմիտեների վրա դրվում է զինվորական ծառայողների ընտանիքների իրավական—ունեցվածքային դրության պաշտպանությունը թե՛ վարչական և թե՛ դատական կարգով, կողմնակի քաղաքացիների կողմից նրանց արդարացի շահերի խախտման դեպքում:

Այդ կոմիտեները պետք է միջամտեն նաև զինվորական ծառայողների ընտանիքների անդամների զանազան շահերը բաղխվելիս արտգործեն և արդար կերպով նրանց լուծելու համար:

Տեղական Գործադիր Կոմիտեները, տեղեկություններ ստանալով, զինվորական ընտանիքների հետ կապված ամենահայտորեն անձեռնտու այնպիսի պայմանների մասին, որոնք կնքված են տնտեսության գույքի վերաբերյալ, պետք է չբավարարվի առանձին դիմումի աշխատողների կողմից, հարուցանեն համապատասխան դատական հայց, այդ պայմանները չեղյալ համարելու կամ նրանց ուժը հետաձգում վերջնչացնելու մասին: Տեղական Գործադիր Կոմիտեները պարտավոր են պաշտպանել այս հայցերը դատարանում իրենց ներկայացուցիչների միջոցով:

Զինվորական ծառայողների ընտանիքների արդարացի շահերը պաշտպանելու համար միջոցներ ձեռք չառնող բոլոր պաշտոնյաները պատասխանատվության են յենթարկվում գործության ունեցող օրենքների համաձայն:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զինապարտ զինվորականների ընտանիքներն որենքով սահմանված պարտադիր դրույքային ապահովագրման վերաբերյալ առնվազն 30 տոկոսի դեպքում են ստանում:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՎՈՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հրամանատարները, քաղ-աշխատակիցները, բժիշկները և վարչական կազմի մնացած այն ծառայողները, որոնք գինվորական ծառայության մեջ են գտնվում, վոչ թե գինվորական պարտականություն կատարման ընհանուր կարգով, հեռավոր վայրում պաշտոն ստանալիս կամ տեղափոխվելիս, ինչպես նաև այդ վայրերում յերկարատև ժամանակ աշխատելու համար ոգտվում են առանձին արտոնություններով և առավելություններով: Այդ արտոնություններով չեն ոգտվում հեռավոր վայրերի տեղական բնակիչները. բացի նրանցից, որոնք վերջին յերեք տարիներն անց են կացրել ուրիշ վայրերում:

Գինվորական այն ծառայողները, որոնք կանչված են ծառայության գինվորական պարտականությունների կատարման կարգով, արտոնություններով չեն ոգտվում, որովհետև նրաք չեն կարող փոխադրվել կամ նշանակվել հեռավոր վայրերը: Բացի դրանից, այդ անձնավորությունների պարտադիր ծառայության ժամանակամիջոցը, համեմատած հրամանատարների, քաղ-աշխատողների և նման մյուս աշխատողների հետ ավելի կարճ է, այդ պատճառով հեռավոր վայրերի ծառայության հատուկ պայմանները նրանց համար այնքան, որքան վարչական կազմի ծառայողների համար ծանր չեն:

Ս. Խ. Հ. Միության հեռավոր վայրերը հաշվվում են.

ԱՍԻԱՅՈՒՄ.— Դաղստանի, Յակուտիայի, Բաշ-ղըրների, (բացի Ուֆայից), Բուրյաթ-Մոնղոլիայի, Կարելիայի (բացի Պետրոգրադակից) ամառնում հանրապետությունները. Կոմի, Ոյրատի և Ղըրղիզստանի ամառնում շրջանները. Արխանգելսկի նահանգը (բացի Արխանգելսկից), Մուրմանսկի, Յենիսեյսկի, Տյումենի, Ալտայի, Նովո-Նիկոլաևսկի, Զայբայկալի, Ամուրի, Մերձծովյան և Կամչատկայի ամառնում շրջանները. Սուուցյալ և Խաղաղ օվկիանոսների կղզիները, վերոնց թվում և Սախալին կղզին:

Անդրկովկասում.—Հայաստանի ՍԽՀ:

Վրաստանից.—Հարավային Օսեթիայի ամառնում շրջանը, Խոսաուրեթիան, Սվանեթիան, Մանղլիսը, Ախալցխան, Ախալքալաքը և Կրասնիյե Կոլոդցի:

Ադրբեջանից.—Լենկորան, Կուզարի և Ղարաբաղի ամառնում շրջանը:

Հեռավոր վայրերին են պատկանում նույնպես և Ուզբեքիստանը և Թուրքմենիստանը:

Հեռավոր վայրերի զինվորական ծառայողներին տրվող արտոնությունները և առավելությունները հետևյալներն են.

ա) Հեռավոր վայրեր նշանակելիս և փոխադրելիս

Զինվորական ծառայողներին հեռավոր վայրեր ինչպես նաև մի հեռավոր վայրից ուրիշ հեռավոր վայր (եթե մեկի հեռավորությունը մյուսից 1000 վերստից ավել է) նշանակելիս և փոխադրելիս օրապահիկ (суточные) և փոխադրատրամ տրվում են կրկնակի չափով:

Նրանց ընտանիքները և ունեցվածքը ծառայության վայրը փոխադրվում են Ռազմ-վարչության հաշ-

վին ապառիկ՝ «պահանջագրերով» («по требованию»)

Պատերազմական գործողությունների ընթացքում հեռավոր վայրեր նշանակված զինվորական ծառայողներն այս արտոնություններով չեն ոգտվում: Իսկ յեթե նրանք մնում են հեռավոր վայրում պատերազմական գործողությունները վերջանալուց, ուղեղրաին ստանում են կրկնակի չափով:

բ) Հեռավոր վայրերում ծառայելու ընթացքում

Հեռավոր վայրերում ծառայության առաջին յերեք ամսվա ընթացքում ռոճիկն ըստ հատուցային պաշտոնի տրվում է կրկնակի չափով:

Հեռավոր վայրերում անընդհատ ծառայելու համար զինվորական ծառայողին լրացուցիչ կերպով տրվում է միանվագ վարձատրություն ծառայության յուրաքանչյուր տարվա համար մի ամսվա ռոճիկը, ծառայության յուրաքանչյուր 3 տարվա համար 2 ամսվա ռոճիկն ըստ նախորդ ամսվա ռոճիկի չափի:

Հեռավոր վայրերում անընդհատ կերպով ծառայած յուրաքանչյուր 3 տարվա համար զինվորական ծառայողներին տրվում է իրավունք ոգտվել 3 ամսյա արձակուրդով (հերթական արձակուրդի փոխարեն) չգրկվելով ըստ պաշտոնի տրվող ռոճիկից:

Արձակուրդի ժամանակամիջոցի մեջ չի մտնում արձակուրդի վայրն ու այնտեղից ծառայության վայրը վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակամիջոցը, իսկ ճանապարհորդությունը կատարվում է ձրիաբար:

Այն անձնավորություններին, վորոնք կամ բոլորովին կամ մասամբ չեն ոգտագործել այս արձակուրդը, տրվում է չոգտագործված ժամանակամիջոցի համար դրամական հատուցում:

Արևելյան Բուխարայի, Խորեզմայի, Պամիրի լեռնապաշտի և Թուրքեստանի ճակատի սահմանապահ կայազորների զինվորական ծառայողների համար հերթական արձակուրդի չափը վերոշվում է 2 ամիս:

Բարձր պաշտոնների համար թեկնածուներ ընտրելիս հեռավոր վայրերի ծառայողները հանդես հանված սպայմանների բավարարող ուրիշ թեկնածուների, ունեն առավելություն:

Կարմիր բանակի յուվ նավատորմիղի ռազմական դպրոցներում կրթություն ստանալու փոխարեն պարտադիր ծառայության ժամանակամիջոցը հաշվելիս, հեռավոր վայրի ծառայության 9 ամիսը հավասարվում է մյուս վայրերի ծառայության մեկ տարվան:

Բոլոր հեռավոր վայրերում ծառայության ժամանակամիջոցը սահմանվում է 6 տարուց վոչ ավել, իսկ Թուրքեստանի ճակատում 5 տարուց վոչ ավել, բացի Արևելյան Բուխարայից, Խորեզմայից, Պամիրյան լեռնապաշտից և սահմանապահ կայազորներից, վորտեղ ծառայության ժամանակամիջոցը 3 տարուց վոչ ավել է:

Այս ժամանակամիջոցները լրիվ կերպով ծառայելուց հետո զինվորական ծառայողները իրավունք ունեն փոխադրվել ուրիշ զորամասեր ըստ իրենց ընտրության:

Հեռավոր վայրերում զինվորական ծառայության մեջ գտնվող ծառայողների յերեխաները, յեթե նրանք ապրում են ուրիշ քաղաքում, իրավունք ունեն տարեկան մեկ անգամ ոգտվել ձրի ճանապարհածախսով յերկու գլխից (ապրելու վայրից—հոր ծառայության վայրը և հետ):

գ) Հեռավոր վայրից փոխադրվելիս, զինվորական ծառա-

յությունից արձակվելիս յեվ մահվան դեպքում:

Հեռավոր վայրում զինվորական ծառայողները, վորոշված ժամանակամիջոցը ծառայելուց հետո, բաց իրենց ընտրության ուրիշ զորամաս կամ զինվորական հիմնարկություն փոխադրվելիս ոգտվում են հեռավոր վայրեր փոխադրվող զինվորական ծառայողի իրավունքներով:

Հեռավոր վայրերում ծառայության մեջ գտնվողին հիվանդության կամ անձնական կարգի կրճատման հետևանքով զինվորական ծառայությունից արձակելիս, նրան ինչպես նայել նրա խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամներին տրվում և իրավունք ձրիաբար փոխադրվել բնակվելու համար ընտրված նոր վայրը:

Այս արտոնությունից, զինվորական ծառայողները յեվ նրանց ընտանիքները իրավունք ունեն ոգտվել 3 ամսվա ընթացքում, ծառայությունից արձակվելու որից հաշված:

Հեռավոր վայրերում ծառայության մեջ գտնվող յեվ զինվորական ծառայությունից արձակվածի ընտանիքին իրավունք և տրվում ձրիաբար տեղափոխվել ծառայողի ընտրած բնակավայրը հետևյալ դեպքերում միայն՝ յեթե ընտանիքը ապրելիս և յեղել նրա հետ, յերբ ճանապարհի յերկարությունը 1000 վերստից յերկար չի, և յերբ ծառայողը հեռավոր վայրում պաշտոնավարել և մեկ տարուց վոչ քիչ:

Հեռավոր վայրում պաշտոնավարելիս, զինվորական ծառայողի մահվան դեպքում, անկախ ծառայության ժամանակամիջոցի, նրա խնամքի տակ գտնվող ընտանիքը իրավունք ունի ձրիաբար փոխադրվել նոր բնակավայրը, յեթե ընտանիքը ապրելիս և յեղել մինչև:

Այս արտոնությունը ուժ ունի, զինվորական ծառայողի մահվան օրից հաշված մի տարվա ընթացքում միայն։ Այս բոլոր փոխադրությունների ընթացքում, հեռավոր վայրում ծառայող զինվորականների ընտանիքները իրավունք ունեն ձրիաբար տեղափոխել իրենց ունեցվածքը հետևյալ քանակով՝ ընտանիքի մեծահասակ յուրաքանչյուր մի անդամին 10 փթից, փոքրահասակին՝ 5–14 տարեկան 5 փթից, իսկ ընդհանուր քաշը 60 փթից վոչ ավել։

Լրացուցիչ արձակուրդների միանվագ վարձատրություններ և հեռավոր վայրերից փոխադրվելու արտոնություններ ստանալու բոլոր ժամկետները հաշվվում են 1923 թվի հունվարի 1-ից։

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունը տալով զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին զանազան տեսակի արտոնություններ և առավելություններ, միաժամանակ հսկում է, վորպեսզի իշխանության մարմինները տեղերում լրիվ կերպով նրանց կիրառեն։ Դրա համար կենտրոնական իշխանությունը կատարում և զինվորական ծառայողների ընտանիքներին արտոնություններ տվող որենքների կիրառման առուգում։ Հետազոտում է այդ ընտանիքների ոգնություն տալու գործի դրությունը։

Կառավարության կարգադրությունները չբխատարդ հիմնարկությունները և անձնավորությունները կամ զինվորական ծառայողների արտոնությունների

որենքները անբավարար չափով կյանքում կիրառողները յենթարկվում են խիստ պատասխանատվության։

Բոլոր հրամանատարները և կոմիսարները պարտական են անընդհատ հետևել, թե ինչպես են իրագործվում կենտրոնական իշխանության որենքները, վորոնց նպատակն է լավացնել զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների դրությունը և կենցաղը։ Նրանք պետք է սերտ կապ պահպանեն զինվորական ծառայողների ամբողջ մասսայի հետ, պարզեն նրանց կարիքները և միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի համապատասխան մարմինները ճշտությամբ կիրառեն զինվորական ծառայողների և նրանց ընտանիքներին տրված իրավունքները և առավելությունները։

Զինվորական ծառայողների և տուն արձակվածների այս բոլոր իրավունքներին ուշադիր կերպով վերաբերվելու գործը ավելի լավ կազմակերպելու համար Կարմիր բանակում և նավատորմիղում ստեղծվում են կարմիր բանակայինների նամակների բյուրոներ և տուն արձակված կարմիր բանակայինների ու նավատորմիղականների կենցաղի լավացման հանձնաժողովներ։

Կարմիր բանակայինների նամակների բյուրոներ

Կարմիր բանակայինների նամակների կենտրոնական բյուրոն գտնվում է Կարմիր բանակի Քաղ-վարչության կից, իսկ շրջանների, (округи) ճակատների բանակների և նավատորմիղների քաղ-վարչությունները ունեն իրենց համապատասխան բյուրոները։

Այս բյուրոները քննում են կարմիր բանակայիններից և մյուս զինվորական ծառայողներից ստացվող նամակները և ձեռք են առնում միջոցներ այդ նամակնե-

չինարարշաղկված պահանջները բավարարելու, յեթե լհարկե, նրանք արդարացի յեն։ Զինվորական ծառայողներին հուզող կամ գոյություն ունեցող որենքներով չը վճռված բոլոր հարցերը բյուրոն տալիս է այն մարմիններին կամ հիմնարկություններին, վորոնք կարող են լուծել այդ հարցերը որենադրական կարգով։

Կարմիր բանակայիններին նամակներում շոշափված հարցերը ժամանակին լուծելու համար, բյուրոն անմիջապես ուղարկում է այն կազմակերպություններին և հիմնարկություններին, վորոնք ինքնուրույն կարող են լուծել այդ հարցերը։

Այն դեպքերում, յերբ քաղաքացիական հիմնարկությունները և կազմակերպությունները, ուղարկված հարցերին բավարարելու համար վոչ մի միջոց ձեռք չեն առնում, բյուրոն տեղեկացնում է դատախազության համապատասխան մարմնին, մեղավորներին դատական կարգով պատասխանատվության կանչելու համար։

Զորամասերում յեվ զինվորական հիմնարկություններում աշխատելու համար շրջանային (окруж.) բյուրոն լիազորում է զորամասի և զինվորական հիմնարկության կոմիսարներին։

Կարմիր բանակայիններին նամակների բյուրոների լիազորները պետք է մշտական և սերտ կապ ունենան քաղաքացիական կազմակերպությունների հետ, զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների խնդիրների բավարարման հարցերում։

Թե կարմիր բանակայիններին նամակների բյուրոները և թե նրանց լիազորները տանում են լայն աշխատանք զինվորական ծառայողների մեջ, բացատրելով

նրանց զինվորական ծառայողների և նրա ազգնեերը նիքների իրավունքները արտոնությունները և առավելությունները, հայտնում են, թե վոր դեպքերում և ի՞նչ պետք է անել այս կամ այն արտոնությունը ստանալու համար, ի՞նչ նշանակություն ունի կարմիր բանակայինների բյուրոյի աշխատանքները յեվ այլն.

Տուն արձակված կարմիր բանակայիններին յեվ նավատորմիղականների կենցաղի բարելավման հանձնաժողովներ

Այդպիսի հանձնաժողովներ լինում են էնտերնատական, շրջանային (окружн.) և նահանգական:

Տուն արձակվածների կենցաղի բարելավման բոլոր հանձնաժողովները պարտավոր են հետևել, վորպեսզի կառավարության բոլոր վորոշումները տուն արձակված զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների արտոնությունների վերաբերյալ լրիվ կերպով կատարվեն տեղական մարմինների կողմից:

Այդ նույն հանձնաժողովները մշակում են նաև միջոցներ լավացնելու տուն արձակվածների և նրանց ընտանիքների կենցաղը համաձայն տեղական պայմանների և համաձայնեցնում են իրենց վորոշումները տեղական խորհրդային մարմինների և կազմակերպությունների հետ:

Տուն արձակվածների կենցաղի բարելավման հանձնաժողովները համապատասխան քաղաքացիական մարմինների հետ միասին, ոգնում են զինվորական ծառայությունից արձակվածներին աշխատանք ստանալ, նրանց թույլ և քայքայված անդամներին ցույց են տալիս նյութական ոգնություն կենդանի և մեռյալ ինվենտարով, սերմացվով, գործիքներով,

ինարարության համար անհրաժեշտ նյութերով, կազմակերպում են գյուղատնտեսական արտելներ և այլն:

Զորամասերի բոլոր հրամանատարները և կոմիսարները, քաղաքական մարմինները, ինչպես նաև բոլոր քաղաքացիական կազմակերպությունները պարտավոր են ամեն կերպ նպաստել այդ հանձնաժողովների աշխատանքներին:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՆԱՎԱՏՈՐՄԻՉԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԵՑ-ՏԱՐԻ ԼԱՎԱՆՈՒՄ Է

Զինվորական ծառայության կանչված Խ. Միության քաղաքացիներին տրված զանազան իրավունքները, արտոնությունները և առավելությունները ցույց են տալիս, վոր Խորհրդային իշխանությունը, զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին ապահովելու համար, ինչ վոր հնարավոր է, անում է:

Ընդհանրապես, վոր մենք դեռևս շատ աղքատ ենք, այնուամենայնիվ աշխարհիս մեջ վոչ մի իշխանություն այնքան հոգ չի տանում իր զինվորական ծառայողների համար, վորքան Խորհրդային իշխանությունը:

Բանվորա-գյուղացիական կառավարությունը վոչ մի րոպե չի մոռանում Կարմիր Բանակ և Նավատորմիղ կանչվածներին, վորոնց դրությունը, մեր Միության ժողովրդական տնտեսության ամրացման և ուժեղացման հետևանքով, քանի գնում ավելի և ավելի լավանում է:

1924 թվի հոկտեմբերին Միության կառավարությունը հաստատեց Կարմիր Բանակի և Նավատորմիղի

զինվորական ծառայողների արտոնությունների և առավելությունների որենքները, իսկ ներկայումս նոր միջոցներ են ձեռք առնվում ավելի ևս լրիվ կերպով նրանց ապահովելու համար:

Ներկայումս Ռազմ-Վարչություն որենքներ և մշակում զինվորական ծառայողներին կենսաթոշակներով (пенсия) ապահովելու և բանակից ու նավատորմից արձակվածներին քաղաքացիական հիմնարկություններում առանց այլևայլության աշխատանք տալու մասին:

Այդ որենքները կյանքի մեջ անցկացնելուց հետո զինվորական ծառայողների դրությունն ավելի ևս կը լավանա և կամրանա: Նրանք կը գիտենան, վոր Խորհրդային իշխանությունը հոգս է տանում վոչ միայն նրանց ներկայի այլև ապագայի մասին:

Կարմիր Բանակի և Նավատորմի ամեն մի մարտիկ միշտ պետք է հիշե, վոր բանվորա-գյուղացիական իշխանությունը, վորքան ներում են նրա ուժերը, անում է ամեն ինչ՝ լավացնելու զինվորական ծառայողի և նրա ընտանիքի կենցաղը և՛ նրանց բոլոր հոգսերից ազատելու համար: Այդ պատճառով ամեն մի մարտիկ պետք է ազնվորեն և լավ կատարե վողջ աշխարհի աշխատավորության կողմից նրա վրա դրված պարտականությունները: Այդ պարտականություններն են ամենից առաջ աշխատավորների շահերը շահագործողների և բռնակալների ճնշումներից պաշտպանելը, Խորհրդային Հանրապետությունների Միությունն ամեն տեսակի վտանգներից և թշնամիների սանձարձակություններից ապահովելը և ամբողջ աշխարհի ժողովրդների յեղբայրության համար պայքարելը:

Այս պարտականությունները լավ կատարելու համար յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է վարքան կարելի յե լավ ուսումնասիրի ռազմական գործը:

Աշխատավորության թշնամիները բազմաթիվ են, հարուստ են և լավ զինված: Նրանց դիմադրել մենք կը կարողանանք միայն այն դեպքում, յերբ ամեն մի շարքային մարտիկ կատարելապես կը գիտենա ռազմական գործը: Պատերազմում հաղթում է վոչ թե նա, ով լավ է զինված, այլ նա, ով ավելի լավ վարժված է, քաջ է և հավատում է իր հաղթանակին:

Բայց ամեն մի կարմիր բանակային պետք է վոչ միայն լավ տիրապետե իր զենքին, այլ պետք է նաև լավ հասկանա, թե հանուն ի՞նչի բանվորա-գյուղացիական իշխանությունը նրան կանչում է կռվելու: Սրանումն է Կարմիր Բանակի ուժը, սրանումն է նրա առավելությունը կապիտալի բանակներից, վորտեղ աշխատում են զինվորներին պահել տգիտության մեջ, վախենալով, վոր նրանք իրենց սվինները կուղղեն կապիտալիստների դեմ:

Կարմիր զորանոցում, կապիտալիստական ճնշման և տրկացման դեմ հեղափոխական մարտիկներ պատրաստող քաղաքական այդ բովում, կարմիր բանակայինը կարող է իմանալ, թե ի՞նչու յե նա գտնվում Կարմիր Բանակում, թե ո՞ւմ շահերն է նա պաշտպանում:

Լավ վարժված, իրենց շահերը պարզ գիտակցող մարտիկների միջոցով, Կարմիր Բանակին և Նավատորմին սարսափելի չե վոչ մի թշնամի, ինչպես էլ նա զինված լինի, վորքան էլ նա տանկերով, թնդանոթներով, ավառնակներով ուժեղ լինի:

Կարմիր մարտիկ, հիշիր քո պարտականությունները, սովորիր ռազմական գործը, աշխատիր քո լուսավորության համար—բանվորների և գյուղացիների իշխանությունը դրա համար քեզ ամեն տեսակի հնարավորություններ է տալիս:



12. Դատական արտոնություններ 42
13. Արտոնություններ պարտադիր դրույքային ապահովագրման վերաբերյալ 43
14. Արտոնություններ ՍԽՀՄ հեռավոր վայրերում ծառայելու համար 44
15. Զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին տրված արտոնությունների հսկողությունը 49
16. Կարմիր բանակի և նավատորմիղի ծառայողների դրությունը տարեց-տարի լավանում է . 53

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039070

[124]

A I / 4484